

891.995

թ.-95

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՐԵՆԱԼԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1

10

ԱՀՅ

ՄԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

ԸՆԿՐԱ

ԱՀՅ



ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

ԵՒ

ՈՒՐԻՇ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

1934

Պատրիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.— Տէրն ՈՒ ԾԱՌԱՆ
 - 2.— ԱՐՁԵԼ
 - 3.— ՔԱՋ ՆԱԶՈՐ
 - 4.— ԱՆՑԱՌԻՆ ՄԱՆՈՒԿԸ
 - 5.— ԵՐԵՔ ԹԻԹԵՌՆԻԿ
-

- Յ. ԹՈւԺանեանի
Գաբրիէլեանի
- Լ. Շանթի կողմէ մշակուած
Ժողովրդական հէքեռ թ
- Դ. Աղայեանի
Թարգմ. Օրտմանէ

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

ՅՈՒՆ. ԹՈՒՄՍԱՆԵՍՆԻ

Երկու աղքատ եղբայրներ կ'ըլլան, որոնք կը մըտածեն թէ ինչպէս ընեն որ պահեն իրենց տունը: Կ'որոշեն վերջապէս որ փոքրը մնայ տունը, իսկ մեծը երթայ ծառայ ըլլայ հարուստի մը քով, դրամ վաստկի ու դրկէ եղբօրը:

Պատիկը կը կենայ տունը, իսկ մեծը կ'երթայ ծառայ կը մոնէ ունեորի մը:

Ծառայութեան պայմանաժամ կը նշանակեն մինչև գարնան կլուի ձայն հանելը: Բայց հարուստը պայման կը դնէ ծառային, թէ մինչև այն ատեն մեզմէ ով որ բարկանայ՝ թող տուժէ: Եթէ գուն բարկանաս՝ հազար լէյ տուզանք պիտի տաս ինծի, իսկ եթէ ես բարկանամ՝ պէտք է ես տամ քեզի նոյն դըրամը:

Բայց ես հազար լէյ չունիմ, կ'ըսէ ծառան:

Հոգ չէ, փոխարէնը տասը տարի ձրի կը ծառայես ինծի:

Աղքատ տղան թէկ կը վախնայ այս կասկածելի պայմանէն, բայց կը խորհի միւնոյն ատեն, թէ իր ձեռքն է բարկանալ կամ չբարկանալը:

«Ինչ կ'ուզեն թող ըսեն, չեմ բարկանարկը լմնայ կ'երթայ, իսկ եթէ իրենք բարկանան աւելի լաւ, թող տուժեն՝ դրուած պայմանին համաձայն»:

Կը համակերպի, պայմանագրութիւնը կը կնքեն և կը լծուի գործի:

Միւս օրը, կանուխ, տէրը արթնցնելով իր ծա-

Ա.Ռ.Ա.ՁԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Արարատիան Սարգս	ճախազահ
Դագաւեան Յովին.	{ Փոխ
Թուրբամպանեան Արց.	ճախազահ
Մատենեան Սմբատ	
Հուլիսան Վ.ահե	
Աւետիքեան Յովին.	{ Խորհրդ
Առաքելիան Վ.արզան	
Շանիկեան Հաչեայ	
Յովնանեան Երուանդ	
Մուրիս Ա.	{ Կառուի-
Մխիրարեան Գրիգոր	
Քեսանեան Գեորգ	{ Իրնիշներ

Ա.Ռ.Դ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Գաղարեան Յովին.	ճախազահ
Յովնանեան Վ.աղարց.	{ Փոխ
Սէմիզեան Գրիգոր	ճախազահ
Մատենեան Սմբատ	
Քէսանեան Գեորգ	{ Խորհրդ
Գողոսիան Գաւիր	
Գենեան Լեոնի	{ Պականուեր
Յովիանիսիան Գեորգ	

ՀՆՈՐԻՆ ԽՈՐՀՈՒԹԻՒՆ

Սէմիզեան Գրիգոր'	ճախազահ
Յովնանեան Վ.աղարց.'	գանձապահ
Քէսանեան Գեորգ'	խորհրդական
ՀԱՇՈՒԽԵՎՆԵԶԵՉՆԵՐ	
Կարկրեան Սմբատ	
Թիւլունինեան Եղուարդ	
Մանուկեան Ա.	Մանուկ

Monitor Ofic. Nr. 128 (1933).

ուան՝ կը զրկէ զայն արտը հնձելու։ Գնա՛, կ'ըսէ ցորչափ լոյս է՝ կը հնձես, իսկ երբ մթնէ՝ կը դառնաս ու կուգաս։

Ծառան կ'երթայ, կը հնձէ ամբողջ օրը, և երբ իրիկունը յոդնած տուն կը վերադառնայ, տէրը կը հարցնէ իրեն։

— Ինչո՞ւ եկար, այ մարդ։

— Եկայ, որովհետն մայր մտաւ արել։



— Զըլլար այրպէս, կ'ըսէ տէրը, ես չըսի՞ քեզի որ պէտք է աշխատիս մինչև մթնելը։ Ճիշդ է, գացած է թէն արել, բայց անոր եղբայր լուսինը կը լուսաւորէ երկիրը, ո՞ւր է մութը, նայէ՛, ի՞նչպէս լոյս է ամէն կողմ։

Ծառան զարմացած կը մնայ, քիչ մ'ալ բարկացածի երևոյթով։

— Բայց կարծեմ բարկացած ես, կը հարցնէ տէրը ծառային։

— Ո՞չ, բարկացած չեմ բնաւ, միայն թէ շատ

յոդնած ըլլալով ուզեցի հանգիստ ընել քիչ մը... կը կակազէ ծառան և կրկին կ'երթայ արտը՝ հնձելու։

Կը հնձէ, կը հնձէ մինչև որ լուսինն ալ կը մտնէ մայրը։ Բայց հազիւ լուսինը անյայտացած՝ կը ցաթէ արմը։ Ծառան ուժասապառ կ'իյնայ արտին մէջ։

— Վայ, խերն անիծեմ քու արտիդ ալ, քու հացիդ ալ, տուած վարձքիդ ալ... կ'սկսի հայհոյել յուսահատած։

— Բարկացած կ'երկի, հա՛, կ'ըսէ հարուստը, տնկուած՝ ծառայի գլխուն։ Երբ բարկանաս, գիտցած ըլլաս մեր պայմանը պայման է, ետքը չըսես թէ անիրաւ վարուեցան հետո։

Եւ համաձայն պայմանագրութեան, կ'ստիպէ որ ծառան հազար լէյ տուգանք տայ և կամ տասը տարի ճրիաբար ծառայէ իրեն։

Խեղճ ծառան կը մնայ կրակի մէջ։ Հազար լէյ չունէր որ տար ու ազատէր հոգին, միևնոյն ատեն անկարելի էր ծառայել այս տեսակ մարդու մը քով, որով կը մտածէ, կը մտածէ, վերջապէս հազար լէյի պարտամուրհակ մը տալով հարուստին՝ ձեռքը պարապ կ'վերադառնայ տուն։

— Ի՞նչ եղաւ, կը հարցնէ պզտիկ եղբայրը։ Մեծը, տրտում տիտուր, կը պատմէ գլխուն եկածը, ի՞նչպէս որ պատահած էր։

— Վնաս չունի, կ'ըսէ փոքր եղբայրը, մի մտահոգուիր բնաւ, միայն թէ հիմակ ալ դուն կեցիր տունը և ես քու տեղդ երթամ ծառայութեան։

Եւ կ'երթայ ծառայ կը մտնէ նոյն հարուստին տունը։

Հարուստը պայմանաժամ կ'ընտրէ դարձեալ մինչև կլուին խօսիլը, պայմանաւ որ եթէ ծառան բարկանայ, հազար լէյ վճարէ կամ տասը տարի ճրի ծառայէ իրեն, իսկ եթէ ինքը բարկանայ՝ պարտամուռուի վճարել նոյն գումարը և անմիջապէս ազատ արձակել ծառան։



(1591-2010)

3369 - 2010

— Զէ՛, այդքանը չի բաւեր, կ'աւելցնէ տղան,
եթէ դուն բարկանաս՝ երկու հազար լէյ տաս ինծի,
իսկ եթէ ես բարկանամ՝ ես տամ երկու հազարը կամ
բան տարի ծառայեմ քեզի ծըխաբար :

Ուրախութեամբ կ'ընդունի հարուստը, պայմա-
նագրութիւնը կ'կնքեն և այս անգամ ալ փոքր եղբայ-
րը կ'սկսի գործի :

Առաջ կ'ըլլայ, բայց ծառան չ'եներ տեղէն : Տէ-
րը դուրս կ'ենէ, ներս կը մտնէ ծառան կը քնանայ
անփոյթ :

— Այ տղայ, ելի՛ր, կէսօր եղաւ :

— Բարկացե՞ր ես, ի՞նչ... գլուխը դուրս կը հա-
նէ ծառան վերմակին տակէն :

— Զէ՛, չեմ բարկանար, կ'պատասխանէ տէրը,
վախցած, միայն կ'ըսեմ թէ պէտք է արտը երթանք
հնձելու :

Վերջապէս ծառան կ'ենէ անկողնէն, կ'սկսի հադ-
նիլ տրեխները : Տէրը ներս դուրս կ'երթայ կուգայ,
բայց միւսը ձեռքերը կ'երեցնէ ու կ'երեցնէ տրեխ-
ներուն վրայ :

— Տղայ, քիչ մը շուտ բռնէ ձեռքերդ, մեզի կ'ըս-
պասէ գործը :

— Ի՞նչ, բարկացա՞ծ ես :

— Զէ՛, ինչո՞ւ բարկանամ, միայն ըսել ուղեցի
թէ շատ ուշացանք այս առտու :

— Հա՛, այդպէս ըսէ, թէ չէ պայմանը պայման է :

Ծառան մինչև կը հագնի տրեխները և արտը
կ'երթան՝ կ'ըլլայ կէսօր :

— Բայց հիմակ ճաշի ատեն է, ոչ թէ հնձելու.
տես ամէն մարդ ճաշի է նստեր, մենք ալ ճաշենք,
յետոյ :

Կը նստին, կը ճաշեն : Ճաշէն վերջն ալ կ'ըսէ,
թէ մշակ մարդիկ ենք, քիչ մը չքնացած, հանդիսա

չըրած՝ չըլլար, և գլուխը խոտերուն մէջ խոթելով կը
քնանայ մինչև իրիկուն :


— Ծօ՛, ելի՛ր, իրիկուն եղաւ, ուրիշները հնձե-
ցին լմնցուցին, մեր արտը մնաց... վայ, քեզ այս կող-
մը զրկողին խերն անիծեմ, քթէդ զայ կերած հացդ
ալ, խմած ջուրդ ալ... Աս ինչ բան էր գլխուս ե-
կաւ... կ'սկսի արտնջալ աղան :

— Վայ, չըլլայ թէ բարկացած ըլլաս, կ'ըսէ ծա-
ռան՝ գլուխը վեր առնելով խոտերուն մէջէն :

— Զէ՛, ո՞վ է բարկացողը, ըսի թէ արդէն մըթ-
ներ է և ժամանակ է տուն երթալու :

— Հա՛, այդպէս ըսէ, երթանք, թէ չէ գիտես
մեր պայմանը. վայ բարկացողին :

Տուն գալով կը տեսնեն որ հիւր է եկեր : Ծառան
կը զրկէ ըսելով թէ՝ գնա՛, մեր ոչխարներէն մէկը
մորթէ :



— Ո՞րը, կը հարցնէ ծառան :

— Ո՞րը որ հանդիպի :

Ծառան կ'երթայ: Քիշ վերջը լուր կը բերեն
հարուստին թէ՝ հասի՛ր, ծառադղ կ'ջաբդէ բոլոր ոչ-
խարներդ: Իսկապէս, հարուստը վազելով կը տեսնէ
որ ծառան մորթեր է բոլոր ոչխարները: Զեռքը գր-
խուն զարնելով կը պոռայ:

— Անիծուիս, տղայ, աս ի՞նչ է, օճախս մարե-
ցիր, կոտրին ձեռքերդ, անպիտան:

— Դուն չ'ըսի՞ր ինծի թէ «մորթէ որը որ պա-
տահի», ես ալ դուրս չերայ հրամանէդ, կը պատաս-
խանէ հանդարտօրէն ծառան: Ի՞նչ, բարկացա՞ր ըբա-
ծիս:

— Ո՛չ, ո՛չ, միայն թէ մեղքցայ այսքան ապրանք
փճացուցած ըլլալուդ:

Պղտիկ եղբայրը, այսպէս քանի մը ամիս, մինչև
ձմեռ ծառայելով այս հարուստին տունը, խերը կ'ա-
նիծէ մարդուն, տակն ու վրայ կ'բերէ զայն՝ հասցնե-
լով յուսահատութեան դուռը: Հարուստը հիմա կը
խորհի թէ՝ ինչպէս ընէ որ ազատի այս ծառայէն, կը-
կուի ձայնը լսելէն առաջ, որովհետև նոր էր սկած
ձմեռը և տակաւին երկար ամիսներ յետոյ պիտի գար
գարունը և լսուէր կկուին ձայնը:

Կը մտածէ, կը մտածէ, յետու կինը կը տանի
անտառը, զայն կը հանէ ծառի մը վրայ, պատուիրե-
լով որ վերէն «կուկու, կուկու» կանչէ: Ինքն ալ
տուն գալով, ծառան կը տանի անտառ՝ որսի պատ-
րուակով: Անտառ մտածնուն պէս, հարուստին կինը
ծառին վրայէն կ'սկսի կանչել. «կուկու, կուկու»:

— Հա՛, աչքդ լոյս, կ'ըսէ տէրը ծառային, կկուն
կանչեց, ժամանակդ լրացաւ:

Տղան հասկցաւ տիրոջ խորամանկութիւնը:
— Զէ՛, կ'ըսէ լսուած բան է որ ձմեռ ատեն կկուն
ձայն հանէ ու խօսի, ի՞նչ տեսակ կկու է աս, պէտք
է սպաննեմ զայն:

Կ'ըսէ և հրացանը կը քաշէ դէպի ծառը:
Տէրը անմիջապէս հրացանին առջկը կենալով
կ'արգիլէ զայն, և կ'սկսի անիծել այդ մարդուն ծա-
ռայութեան մտած օրը:

— Բարկացած չի՞ս, կը հարցնէ ծառան:

— Բարկացած եմ, այո, բարկացած եմ, ալ հե-
րիք է, եկո՛ւր ինչ տուգանք կ'ուզես տամ և ազատիմ
ձեռքէդ: Ճիշդ է եղեր որ կ'ըսեն թէ՝ «մարդ ինչ որ
ընէ իրեն կ'ընէ»:

Ալապէս, փոքր եղբայրը մեծ եղբօրը տուած
պարտքին թուղթը պատուելով, հազար լէտով կը վերա-
դառնայ տուն, այնքան կասս և նեղութիւն տալէ վերջ
իր տիրոջ:

Ու այն օրէն ի վեր հարուստը այլս ոչ այդ տե-
սակ պայման կը գնէ իր ծառաներուն և ոչ ալ զա-
նոնք կը դրկէ արտ, որ հնձեն լուսնի լուսով:



ԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Չեմ գիտեր թէ ինչու որսորդ Պետրոսը որոշած էր բնակիլ իմ հայրենի անտառիս մէջ, բայց ես չէի սիրեր բնաւ այդ մարդը, որովհետև անիկա ինծի հանդիպած առաջին վայրկեանէն թշնամական վերաբերում ցոյց տուաւ և շարունակ աշխատեցաւ զիս բռնել կամ սպաննել, ինչպէս կրնայի սիրել մէկը, որ իմ գոյութեանս կ'սպանար միշտ:

Երբեմն կը խորհէի նոյն իսկ, թէ գուցէ Պետրոսը մէկն է այն որսորդներէն, որոնք սպաննած են մայրը, փոքր եղբայրս ու քոյրս: Կի՞ բան է այս ըսածը, այնքան հին որ հազիւ չնշին բան մը կը յիշեմ այսօր այդ դէպքէն, որովհետև փոքր թոժիւն մըն էի այն ատեն: Այնքան միայն կը յիշեմ, թէ շատ ուրախ ժամանակ կ'անցնէինք այդ միջնոցին երեք արջուկներս, խաղալէն զատ ուրիշ ո՛ւնէ զբաղում չունէինք բնաւ, կը զուարձանայինք և կը վայելէինք մեր բարի մօր գգուանքները:

Մինակ մնացած օրէն փոխուեցաւ ամէն բան. այնքան փոքր էի տակաւին, որ չէի կրնար ճարել օրապահիկս, հետզհետէ նիհարցայ, տգեղցայ, այնպէս որ հազիւ կրնայի պտտցնել վտիտ, անխնամ մարմինս, ո՞ւր էր առաջուան գիրուկ, կունտիկ, լգուած ու մաքրուած թոժիւնը՝ ինչպէս տեսած էին զիս բոլոր ծանօթ արջերը, որոնք հիմա չէին ճանչնար զիս:

Ողջ էր թէն հայրս, բայց ինձմով չէր հետաքրքր-

ուեր բնաւ, վրաս անգամ չէր նայեր, գուցէ մոռցած խսկ էր իմ գոյութիւնս: Ի՞նչ ընենք, այսպէս է արջերուն սովորութիւնը, արջ-հայրերը հոգ չեն տանիր բնաւ իրենց զաւակներուն:

Առաջին շաբաթները մեծ դժուարութեամբ կրցայ ապրիլ, իսկ երր եկաւ ամառը՝ տաք օրերուն հետ ըսկըսան փոխուիլ նաև կեանքիս պայմանները: Անտառը հարատացաւ պտուղներով և կաղիններով, որոնցմէ կ'ուտէի ուզածիս չափ, որով ձմեռուան քունիս համար բաւելու չափ կրցայ իւղ կապել և գիրնալ:

Հետզհետէ մեծնալով կատարեալ արջ եղայ և, արջերու սովորութեան համեմատ, սկսայ առանձին կեանք վարել՝ անտառին մէջ առատօրէն գտնելով սրտիս սիրած ուտելիքները:

Մնունդի մասին փափկաճաշակ և դժուարահաճ չէի բնաւ, կ'ուտէի ինչ որ հանդիպէր՝ արմտիք, արմատներ, սունկեր, պտուղներ, ձկներ և թոչուններու հաւկիթներ, նոյնիսկ թոչուններն ալ կ'ուտէի, եթէ կարենայի բռնել զանոնք իրենց բոյներուն մէջ, բայց ամէնէն շատ կը սիրէի մեղրը և մեծ հրճուանք կ'ըգգայի, եթէ ծառի մը խոռոշին մէջէն մեղուններու բըգգիւնը լսէի և կարենայի մօտենալ անոնց փեթակին: Մեղուններու խայթոցներէն չէի վախնար բնաւ:

Մենակ կ'ապրէի թէն, բայց բաւական զոհ էի վիճակէս՝ ցորչափ մեր անտառին մէջ բնակութիւն չէր հաստատած Պետրոսը: Ըսի նախապէս թէ ինչ անտանելի դրացի էր այդ մարդը, և տակաւին մինչև այսօր ալ չեմ հասկցած թէ ինչո՞ւ զիս կը հալածէին մարդիկ:

Եթէ հանգիստ ծգէին զիս, ես երբէք գործ չէի ունենար անոնց հետ, որովհետև ես չեմ նմանիր բընաւ իմ գիշատիչ ազգականներոււ, ես չեմ ուզեր մարդ ուտել: Ես կ'ուզեմ միայն՝ ամառը հանգիստ կոտրտել ծառերը, ուտել պտուղները, իսկ ձմեռը երկար քուն քաշել մինչև գարուն:

Ախ , եթէ գիտնայիք արջերու քունին քաղցրութիւնը՝ ձմեռուան ցրտաշունչ երկար ամիսներու ընթացքին՝ դուք ալ կը փափաքէիք արջ ըլլալ : Աշնան սկիզբները ինձ համար յարմար որջ մը կը վնասուեմ ժայռի մը կամ գետին ինկած ծառի մը խոռոշին մէջ , և ցուլտերը սկսածին պէս կը մտնեմ որջս , կը ծածկուիմ նախապէս իմ պատրաստած շիւղերով ու ճիւղերով , և որպէսզի հետքս կորսնցնեմ , ետ ետ կ'երթամ ներս մտած ատենս , կ'անյայտանամ և կը քնանամ հանգիստ ու ապահով : Տեսէք , որքան խելացի ենք արջերս :

Ես սովորաբար որջս կը մտնեմ այն ատեն միայն , երբ ճիւնը կ'սկսի տեղալ ու ծածկել ամէն բան : Պիտի զարմանաք գուցէ թէ ինչպէս կրնամ օդ առնել և շնչել ճիւնի թանձր խաւին տակ , թերևս պիտի կարծէք նոյնիսկ , որ շատ ատեն կը խեղդուին ալ արջերը իրենց ծակին մէջ՝ օդի պակասութենէն : Անհոգ եղէք այդ մասին , արջերս կրնանք ամենահամագիստ կերպով շնչել ճիւնին տակ , որովհետեւ մեր տաք շունչէն ճիւնը հալելով ծակ մը կը բացուի , ուրկից օդը կը մտնէ ներս , և եթէ ո'նէ չար մարդ կամ դժբախտ դէպք անհանգիստ չընէ մեղ՝ մինչև գարուն կը քնանանք անուշ անուշ :

Բայց Պետրոսի պէս դրացի մը ունեցողը կրնայ քնանալ հանգիստ : Տակաւին ձմեռուան առաջին օրերուն , հաղիւ տեղաւորուած քնակարանիս մէջ , նոյնիսկ դեռ չէի ալ քնացած , Պետրոսը նկատեց որջս : Շուները պաշարեցին զիս , իսկ ինքը հրացանը բոնած պատրաստ կ'սպասէր մօտերը : Ի հարկ է , անհնար էր այլևս հանգիստ մնալ հոն , որով յանկարծ դուրս խոյացայ և այնպէս արագ վաղեցի , որ Պետրոսը հազիւժամանակ ունեցաւ ետևէս կրակերու , բայց բախտէս գնդակը վրիպեցաւ և ինձի չգպաւ քնաւ :

Յաջորդ ա հառուան ամբողջ տեսողութեան ետևէս ինկած էր այդ որսորդը , կ'ուզէր որսալ զիս , բայց ես միշտ յաջողեցայ փախչիլ անոր ձեռքէն : Դուք կը կարծէք թէ ասպուշ կենդանիներ ենք արջերս , բայց կը սխալիք , գիտցած ըլլաք որ մենք ձեր կարծածէն շատ աւելի խելացի ենք :

Նորէն եկաւ աշունը և ես , որջս մտնելէ առաջ , ուզեցի վերջին պտոյտ մը ևս ընել անտառին մէջ և լաւ մը կշտացնել փորս : Եւ որովհետեւ մենք արջերս կը սիրենք կոխկլատուած ճամբաներէն քալել , շարունակեցի ճամբաս կածանէ մը (նեղ ճամբայ) և հասայ եղերքը վտակի մը , որուն վրայ ծգուած քանի մը եղմնիներ իրրև կամուը կը ծառայէին : Զգուշութեամբ սկսայ անցնիլ այդ կամուը թէն :

Արջերուս հոտառութիւնն ու լսողութիւնը շատ սուր են և ատոնց չնորհիւ է որ շատ անգամ կ'ազատինք թշնամիին ձեռքէն , իսկ եթէ նոյնքան ալ սուր տեսողութիւն ունենայինք , ի հարկ է մեծ գժուարութիւններով պիտի կրնային որսալ մեղ :

Դժբախտաբար , վայրի բադեր որսալու համար Պետրոսը պահուը տակ անուշած է եղեր այդ կամուրջին տակ :

Հողը փափուկ ճիւնով ծածկուած ըլլալուն համար որսորդը չկրցաւ լսել ոսմածայներս . բոլորովին մօտեցեր էի անոր , երբ յանկարծ տեսանք գիրար :

Երկուքս ալ ցնցուեցանք , նոյնիսկ վախցաւ Պետրոսը և անմիջապէս հրացանը քաշելով կրակեց , բայց այնքան վրդովուած էր , որ չկրցաւ մինչև անգամ ուղիղ նշան տունել , նորէն վրիպեցաւ գնդակը :

Բայց ես սաստիկ բարկացած՝ ակռաներովս բռնեցի հրացանը և չկրնալով անոր երկաթէ խողովակը կոտրել՝ կտոր կտոր ըրի հրացանին վայտէ կոթը :

Պետրոսը , փոխանակ իր հրացանը ազատել ջա-

Նալու ,զետին ինկաւ և թևերը փուած մնաց անշարժ : Կարծեցի թէ հրացանին հարուածը փոխանակ ինծի դպելու սնոր գացած և սպաննած էր զայն : Քանի մը անգամ դարձայ շուրջը , տեսայ որ ոչ մէկ շարժում չըներ՝ համոզուեցայ մեռած ըլլալուն : Եւ որովհետև արջերս սովորութիւն չունինք քնացած կամ մեռած



մարդոց վասելու , ձգեցի զայն հանգիստ՝ ուղելով շարունակել ճամբաս : Հազիւ երկու քայլ առած՝ տեսայ Պետրոսին որսորդութեան պայուսակը բաղերով և ճագարներով իցուն : Չես ուտեր այդ համով ընթրիքը :

Մինչդեռ՝ կրնակս Պետրոսին դարձուցած և բոլորովին զայն մոռցած՝ կ'ուտէի պայուսակին մէջինները , յանկարծ տեսնեմ որ այդ մեռած կարծած մարդսեեր դէպի անտառ կ'փախչի :

Համեղաճաշակ ուտելիքները արդէն իջեցուցեր էին բարկութիւնս , բայց քանի որ մարդը կ'փախչէր , ես ալ ինկայ ետևէն : Պոտք է ըսեմ որ մէծ զուարձութիւն պատճառեց ինձ այդ խաղը :

Ակնթարթ մէր մնացած անոր հասնելուս , երբ Պետրոսը արագացուց իր վազքը , նորէն բարկացայ և ուզեցի անպատճառ բռնել : Պէտք է զիսնաք որ շատ ուժեղ ենք թէ արջերս , բայց մեր այդ ուժը կը կրրկնապատկուի բարկացած ատեննիս , ուրեմն կրնաք երևակայել թէ ինչ կ'ըլլայ այդ վայրկեանին ձեռքս անցնող թշնամիին վիճակը : Խեղդիլ և ձգելը բան մը չէ , իրաւ որ :

Պետրոսը արսավիէն կը վազէր դէպի մեծ զետը , որուն մէջ կը թափին մանր վտակները : Կը կարծէի թէ զետեղերք հասածին պէս ետ պիտի դառնայ , որով գիւրաւ պիտի կարենամ բռնել զինքը , բայց այդպէս չեղաւ , ծառի մը հանդիպելով արագ արագ վեր ելաւ :

Պիտի կարծէք թերեւ , թէ ես ալ շուարած մնացի վարը . ո՛չ , ես ալ սկսայ ծառը ենել , ի հարկէ քիչ մը աւելի դանդաղ բաղդատմամբ Պետրոսին : Վեր նայելով տեսայ որ Պետրոսը ճիւղի մը վրայ նստած ինծի կը նայի , կը կարծէր որ ես ծանր մարմինովս պիտի չկրնայի ենել ճիւղին վրայ : Գուցէ անխոնեմութիւն էր ինծի համար այդպէս քայլ առնելը , բայց այնքան բարկացած էի որ չկրցայ բարակը մտածել :

Սկսայ բարձրանալ , խսկ Պետրոսը զոյնը նետած իրարու կը զարնէր ակռաները : Ես որքան մօտենայի Պետրոսը աւելի կը հեռանար դէպի ճիւղին ծայրը :

Ճիւղը ծոեցաւ և ճարճատիւնով մը կոտրուելով
ես ու Պետրոսը ինկանք վար։ Ծառը բարձր էր և
մենք անոր գագաթն էինք հասած, եթէ հողին վրայ
ինկած ըլլայինք, բուրդ էր գործերնիւ, բայց որովհե-
տև ճիշդ գետեզերքն էր ծառը, ինկանք ջուրին մէջ
և սկսանք լողալ։ Պետրոսը ի՞նչ եղաւ՝ չեմ զիտեր, ինձ
համար ախորժելի չէր պաղ ջուր, բարեբախտաբար
լաւ լողալուս շնորհիւ հասայ եղերքը և շարունակեցի
ճամբաս։

Կարծեմ թէ Պետրոսն ալ լողալով եղերքն ելած և
կամաց մը կծկած էր վախէն։ Չեմ կարծեր որ առ-
կից վերջ արջ որսալ ուզէ ան։



Փ Ա Զ Ն Ա Զ Ո Ր

Գրեց՝ Խնառն Շահա-

Կ'ըլլայ չըլլար իսեղճ մարդ մը, անունը Նազար։
Ծոյլ ու անշնորհք մարդ մը, և այնքան վախկոտ,
այնքան վախկոտ, որ մինակը ոտքը ոտքէն առաջ չէր
դներ, թէ սպաննէիր ալ։ Օրը մինչև իրիկուն կնկա-
նը փէշին վակած՝ անոր հետ դուրս կ'ելլէր, անոր հետ
ներս կը մտնէր։ Անունը դրեր էին վախկոտ-Նազար։

Ալս վախկոտ Նազարը գիշեր մը կնոջը հետ դուրս
կ'ելլէ իրենց շեմքը։ Որ դուրս կ'ելլէ իրենց շեմքը,
կը տեսնէ ճրբքճրքան լոյս-լուսնակ գիշեր է, կ'ըսէ։

— Այ կնիկ, ի՞նչ կարաւան կտրելու գիշեր է . . .
Սիրաս կ'ըսէ՝ ելի՛ր գնա Հնդկաստանէն եկող Շահի
կարաւանը կտրէ՛, բեր, տունը լեցուր . . .

— Զայնդ կտրէ՛ ու տեղդ նստէ՛. կարաւան կը տ-
րողիս նայեցէ՛ք . . . — կը ծաղրէ կինը։

— Մնզգաւմ կնիկ, ի՞նչո՞ւ թող չես տար, որ եր-
թամ կարաւանը կտրեմ բերեմ տունը լեցունեմ։ Եւ
ալ ի՞նչ տղամարդ եմ ես, որ դուն կը համարձակիս
առջևս խօսելու։

Մարդը որ շատ կը խօսի, կինը կը մտնէ տուն
ու դուռը ետևէն կը գոցէ։

— Հողեմ այդ վախկոտ գլուխդ. դէ՛, հիմա գնա՛
կարաւան կտրէ։

Նազարը կը մնայ դուրսը։ Վախիէն լեզապատառ՝
ինչքան կ'աղաղակէ, կը պաղատի, որ կնիկը դուռը
բանայ, ի գուր, կնիկը չի բանար։ Ճարը կտրած կ'եր-



Թալ պատին տակը կը կծկտի ու դողահար կ'անցնէ գիշերը, մինչև լոյսը կը բացուի:

Նազարը սրդողած պառկեր է արևկող այն պատին տակը ու կը սպասէ, որ կնիվկը գայ ու տուն տանի:

Ամառուան տաք օր, ճանձերը լեցուն, ինքն ալ ալարկոտ, կը ծուլանայ մինչև անզամ քիթ ու բերանը

սրբելու. ճանձերը կուգան, կը նստին ու կը լեցուին անոր քիթ ու պոռունգին: Որ շատ կը նեղացնեն՝ ձեռքը կը տանի, կը զարնէ երեսին: Ճանձերը կը ջարդուին, կը թափին գետին:

— Վայ, սա՞ ինչ բան էր... — կը մնայ զարմացած :

Կ'ուղէ համրել, թէ մէկ զարկսվ քանի՞ հատ է սպաններ, համրել չի կրնար: Կը մտածէ, որ հազարէն պակաս չէ ըլլալու:

Վահ. Ես այնպէս քաջ մարդ եմ եղեր, կ'ըսէ, ու մինչև այսօր չեմ գիտցեր. . . . : Ես որ կրնամ մէկ զարկով հազար շունչ-կենդանի ջարդել, ալ ինչու եմ կեցեր այս անպիտան կնկան քովը:

Կ'ելլէ հոդիկ ու կ'երթայ շխտակ իրենց գիւղի տէրտէրին կուշտը:

— Տէ՛րտէր, օրհնեա՛ ի Տէր:

— Աստուած օրհնէ որդի՛ս:

— Ա՛ տէրտէր, հազար չես ըսեր՝ ասանկ ասանկ բան:

Ու կը պատմէ իր քաջագործութիւնը, հետն ալ կը յայտնէ որ իր կնկանը քովէն պէտք է կորչի: Միայն կը խնդրէ, որ իր ըրած քաջութիւնը տէրտէրը գրի առնէ, որ անյայտ չմնայ, որ ամէնքն ալ կարդան ու գիտնան: Տէրտէրն ալ կատակի համար լաթի կտորի մը վրայ կը գրէ:

«Անյաղթ հերոս քաջըն նազար,

Որ մէկ զարնէ՝ ջարդէ հաղար»:

Եւ կուտայ անոր: Նազարն կ'ամրացնէ այս լաթին կտորը փայտի մը ծայրը, ժանգոտած թուրի կը-տոր մը կը կապէ մէջքը, կը նստի իրենց հարեւանի իշուն վրայ ու դուրս կուգայ գիւղէն:

Դուրս կուգայ գիւղէն, կը բռնէ ճամբայ մը ու կ'երթայ: Ինքն ալ չգիտէ, թէ այդ ճամբան ուր կը

տանի : Կ'երթայ , կ'երթայ , մէյ մըն ալ ետ կը նայի ,
կը տեսնէ գիւղէն հեռացեր է : Սիրաը վախ կ'իյնայ :
իրեն սիրտ տալու համար կը սկսի քթին տակէն
մըմուալ , երգել , ինքնիրենը խօսիլ և իշուն վրայ բար-
կանալ : Քանի կը հեռանայ՝ այնքան վախը կ'աւել-
նայ , քանի վախը կ'աւելնայ՝ այնքան ձայնը էր բարձ-
րացնէ , կը սկսի գոռզոռալ , հետն ալ միւս կողմէն է-
շը կը սկսի զուալ : Այս աղմուկէն ու աղաղակէն թրո-
չունները կը փախչին մօտիկ ծառերէն , նապաստակ-
ները թուփերէն , գորտերն ալ կանաչներուն մէջէն
կը թափին ջուրը ...

Նազարը ձայնը աւելի էր ծգէ գլուխը : Իսկ երբ
կը մտնէ անտառ , կարծես թէ ամէն ծառի տակէն ,
ամէն թուփի մէջէն , ամէն քարի ետևէն , ուր որ է ,
հիմա գաղան մը պիտի յարձակի կամ աւաղակ մը :
Սարսափահար կը պոռայ , ինչ կը պոռայ ...

Դուն մի՛ ըսեր , այդ ժամանակ գիւղացի մը ծին
ետևէն քաշերով անտառին մէջէն միամիտ կուգայ :
Այս զարհուրելի ձայնը , որ ականջը կ'իյնայ , կանգ
կ'առնէ :

— Բանն վերջացաւ , կ'ըսէ . կայ ու չկայ աւա-
ղակներն են :

Չին կը թողնէ , կը նետուի ճամբուն տակի ան-
տառը ու երկու ոտք ունէր , երկուքն ալ փոխկառնէ
ու կը փախչի :

Բախտ սիրեմ , Քաջ Նազար : Գոռզոռալսվ կու-
գայ , կը տեսնէ թամբած ծի մը ճամբուն մէջտեղը
կեցած իրեն կը սպասէ : Էշէն կ'իյնէ վար , էր հեծնէ
ծին ու կը շարունակէ ճամբան :

Շատ կ'երթայ թէ քիչ կ'երթայ , շատն ու քիչը
ինք գիտէ , կ'երթայ ու կը հասնի գիւղ մը . ինքը
գիւղին անծանօթ , գիւղը իրեն : Ո՞ւր երթայ , ո՞ւր
չերթայ : Տունէ մը գուռնայի ձայն կը բուի . ծին եր

քշէ դէպի այդ տունը , կ'երթայ ու կ'իյնայ հարս-
նետուն մը :

— Բարի օր ձեղի :

— Այ Աստծու բարին քեղի , բարի եկար , հա-
զար բարով :

Հրամեցէք , հա՛ հրամեցէք . տէ , հիւրը Աստծ-
ծունն է . կը տանին ու կը բաղմեցնեն սեղանին վե-
րին ծայրը իր դրօշակին հետ : Ու աշքդ բարին տես-
նէ , ինչ որ անոր առջեր կը լեցնեն թէ՛ ուտելիք ,
թէ՛ խմելիք :

Հարսներները կը հետաքրքրուին թէ ո՞վ է այդ
տարօրինակ անծանօթը : Վարի ծայրէն մէկը կը բո-
թէ իր քովը նստածին ու կը հարցնէ , աս ալ իր քովի
նստածին կը բոթէ ու կը հարցնէ , և այսպէս կար-
գով իրար բոթելով ու հարցնելով բանը կը հասնի
վերին ծայրը նստած տէրտէրին : Տէրտէրը կերպով
մը կը կարգայ հիւրի դրօշակին վրայինը :

«Անյաղթ հերոս , Քաջըն Նազար ,

Որ մէկ զարնէ ջարդէ հազար» :

Կը կարդայ ու զարհուրած կը յայտնէ իր քովը
նստածին , աս ալ ի՛ր կողքի նստածին , աս ալ երրոր-
դին , երրորդը՝ չորրորդին . այսպիսով կը հասնի մին-
չև դրան տակը նստողին և ամբողջ հարսնետաւնը կը
սարածուի , թէ պա՛ չե՞ս ըսեր , նորեկ հիւրը ինքն
է եղեր ,

Անյաղթ հերոս , Քաջըն Նազար ,

Որ մէկ զարնէ ջարդէ հազար :

— Քաջ Նազարըն է , հա՞ . — կը բացականչէ պար-
ծենկոտին մէկը : — Ինչքա՞ն է փոխուեր . մէկ անգա-
մէն լաւ չի ճանչցայ ...

Եւ մարդիկ կը գտնուին , որ կը պատմեն անոր
բած քաջագործութիւնները , իրենց ինն ծանօթու-
թիւնը և միասին անցուցած օրերը :

— Հապա ի՞նչպէս է, որ այդ տեսակ մարդը հետք ոչ մէկ ծառայ չունի. — բարմանքով կը հարցնեն անձանօթները :

— Ատանկ է անոր սովորութիւնը, ծառաներով պատիլ չի սիրեր : Անգամ մը իրեն հարցուցի . բաւ ծառան ինչի՞ն է պէտք, ամբողջ աշխարհը իմ ծառան է ու իմ ծառան :

— Հապա ի՞նչպէս է, որ կարգին թուր մը չունի, այդ ժամանակ երկաթի կտորն է մէջքը կապեր :

— Շնորհքն ալ ճիշտ ատոր մէջն է, որ այդ ժամանակու երկաթի կտորով մէկ կարնես ու ջարդես հապար, թէ չէ լաւ թրով, ի՞նչ կայ որ, սովորական քաջերն ալ կը ջարդեն :

Ու ապշած ժողովուրդը ոտքի կելլէ ու կը խմէ Քաջ-Նաշարի կենացը : Իրենց մէջի խելօքն ալ առաջ կուգայ ու ճառ մը կ'ըսէ Նազարին . կ'ըսէ՝ մէնք շատոնց լսեր էինք քու մեծ հոչակը, կարօտ էինք երեսդ տեսնելու և ահա այսօր բախտաւոր ենք, որ քեզի կը տեսնենք մեր մէջը : Նազարը կը հառաչէ ու ձեռքը թափի կուտայ : Ժողովուրդին մէջ խորհրդաւոր կերպով իրարու աչք կ'ընեն, կը հասկնան, թէ այդ հառաջանքն ու ձեռքի թափի տալլը ինչքա՞ն բաներ կը նշանակէ :

Ու ցրուելով հարբած հարսնեւորները ամէն կողմ կը տարածեն, թէ շուտով գալու է

Անյաղթ հերոս, քաջն Նազար,

Որ մէկ զարնէ, ջարդէ հաշար :

Կը պատմեն անոր զարմանալի քաջապործութիւնները, կը նկարագրեն անոր ահոելի կերպարանքը : Եւ ամէն տեղ իրենց նորածին երեխաներուն անունները կը դնեն Քաջ-Նազար :

Հարսնեաւունէն կը հեռանայ Նազարը ու կը շարունակէ իր ճամբան : Կ'երթայ, կ'երթայ ու կը հաս-

նի կանանչաղարդ դաշտ մը : Այս կանանչ դաշտին մէջ կը թողու ձին որ արածի, դրօշակը կը տնկէ և ինքն ալ դրօշակին շուքին տակ կը պառկի, կը քնանայ :

Դուն մի՛ ըսեր եօթը հսկայ եղբայրներ կան՝ եօթը աւազակապետ, այս տեղերը իրենցն են, իրենց ամրոցն ալ մօտակայ սարին գլուխն է : Այս հսկաները վերէն մաիկ կ'ընեն ու կը հասկնան որ մարդ մը եկեր է իրենց բնակավայրը և տուք փառօք բազմեր է հոն: Շատ կը զարմանան, թէ ի՞նչ տեսակ սրտի աէր և քանի գլխանի մարդ պէտք է ըլլայաս արարածը, որ առանց քաշուելու եկեր է իրենց տունն ու տեղը բազմեր ու ձին ալ դաշտը արձակեր է : Եօթը հսկայ եղբայրներէն ամէն մէկը երկաթէ գունդ մը ունէր քառասուն լիդրանոց : Այս քառասուն լիդրանոց գունդերը վերցուցած եկած էին: Կուգան, ի՞նչ տեսնեն աղէկ . ահա ձի մը որ կ'արածուի դաշտին վրայ, մարդ մը կողքին քնացած, գլխուն վերեր դրոշակ մը տնկած և դրօշակին վրայ ալ սապէս գըրուած :

Անյաղթ հերոս, քաջըն Նազար,
Որ մէկ զարնէ, ջարդէ հաղար :

Վա՛յ մայրիկ, քաջ Նազարն է եղեր . . . : Մատերնին կը կրծեն հսկաները ու տեղն ու տեղը սառած կը մնան: Դուն մի՛ ըսեր թէ հարբած հարսնենեւորներուն տարածած լուրը ասոնց ալ ականջը հասած է : Այսպէս թուքերնին ցամքած, չորցած կը սպաւեն մինչեւ որ Նազարը քունը առնէ ու արթընայ. մէյ մըն ալ կ'արթնասյ, աչքերը կը բանայ ու իր գլխուն վերեր կը տեսնէ քառասուն լիդրանոց երկաթաղունդերը ու մերնուն վրայ առած եօթը հսկաներ կուգան, ալ փորին մէջ սիրտ չի մնար : Կը մտնէ դրօշակին փէշերուն ետև ու կ'սկսի դողալ

այնպէս, ինչպէս տերեւ կը դողայ աշնան հովէն։ Հըս-
կաները երբ կը տեսնեն որ անիկա գունատած է ու
սկսած է դողալ, կը բարկացած է, հիմա ուր
որ է մէկ հարուածով եօթերնիս ալ կրտպաննէ։ Ուս-
տի՝ անոր առջն գետինը կը փոռւին ու կը պաղատին
սապէս.

— «Անցաղթ հերոս, քաջրն Նաղա՛ր,
Որ մէկ զարկով ջարդես հաղար.

«Մենք լմեր էինք քու ահաւոր անունդ, կը փա-
փաքէինք արժանանալ քեզ տեսնելու. հիմա բախ-
աւոր ենք, որ անձամբ մեր հողն ես եկեր։ Մենք
քու խոնարհ ծառաներդ՝ եօթը եղբայրներ ենք. ա-
հա մեր ամրոցն ալ սարին գլուխն է, մէջն ալ՝ մեր
գեղեցիկ քոյրը։ Կ'աղաշենք որ շնորհ ընես՝ զարու
մեր հացը կտրելու...»։

Այս խօսքերուն վրայ՝ Նաղարին շունչը տեղը
կուգայ, կը նսաի իր ձին, անոնք ալ դրօշակն առած՝
առաջ կ'իյնան ու համդիսաւորապէն իրենց ամրոցը
կը տանին զինքը։ Ամրոցը կը տանին, կը պահեն զին-
քը, թագաւորի վայել պատիւով կը պատուեն, ու այն-
քան կը խօսին իր քաջագործութիւններուն մաւին,
այնքան կը գովեն, որ իրենց գեղեցիկ քոյրը կը սիրա-
հարուի մեր քաջ-Նաղարին։ Ինչ խօսք, որ յարգն
ու պատիւն ալ, ասոր վրայ, իր անձին նկատմամբ
հետզհետէ աւելի կը մեծնայ։

Այդ օրերը վագր մը կ'երեայ այդ երկրին մէջ
ու սարսափ կը ձգէ ժողովուրդին վրայ։ Ո՞վ կը սպան-
նէ, ո՞վ չըսպաններ այդ վագրը։ Ի հարկէ Քաջ-Նա-
ղարը կը սպաննէ։ Ուրիշ ո՞վ սիրո կ'ընէ վագրին վրայ
երթալու։ Ամենքը կը նային Նաղարին երեսը, վերը
մէկ Աստուած, վարը մէկ Քաջ-Նաղար։

Վագրի անունը լսելուն պէս Նաղար վախէն

դուրս կը վագէ, ետ վախչիլ կ'ուղէ իրենց տունը,
իսկ հօն կեցողները կը կարծեն, թէ կը վագէ, որ
երթայ վագրը սպաննէ։ Կը բոնեն ու կը կեցնեն, թէ
ո՞ւր կը վագես այդպէս առանց զէնքի, զէնք ա՛ռ
հետդ, այնպէս գնա՛։ Զէնք կը բերեն, կուտան ի-
րեն, որ երթայ իր վառքին վրայ քաջութիւն մըն-
ալ աւելցնէ։ Նաղարը զէնքը կ'առնէ ու կ'երթայ։

Կ'երթայ անտառ, ծառ մը կը բարձրանայ, վրան
կը կծկաի, որ ո՛չ ինքը վագրին պատահի, ո՛չ ալ
վաերը իրեն։ Հակառակի պէս անտէր վագրն ալ կու-
գայ ճիշտ այդ ծառին տակը կը պառկի։ Նաղարը որ
վագրը չի տեսնե՞ր, լեզին ջուր կը կտրի, աչքերը
կը սենան, ձեռքն ու ստքը կը թուլնան ու, թրը մի,
ծառէն կի՛յնայ գաղանին վրայ։ Վագրը սարսափած



տեղէն վեր կը ցատկէ, Նաղարն ալ վախէն կը կպչի
անոր մէջքին։ Ու այսպէս կը վախչի խրանած վագ-

Եր՝ զարհուրած Նազարը մէջքին փակած, ի՞նչ կը
փախչի, ո՞չ սար ու ձոր կը հարցնէ, ո՞չ քար ու փոս:

Մարդիկ մէյ մըն ալ կը տեսնեն, վահ, Քաջ-Նա-
զարը հեծեր է վագրը ու կը քշէ:

— Հայ, հարայ, եկէք, հա՛ եկէք, Քաջ-Նազա-
րը վագրը ձի է շիներ ու հեծեր: Զարկէք, հա՛ զար-
կէք:

Սիրտ կ'առնեն, ամէնքը մէկ կողմէն աղմուկով,
հրհոցով կը յարձակին վրան, կը զարնեն դանակով,
թուրով, հրացանով, քարով, փայտով ու կը սպան-
նեն:

Նազարը որ ուշքի կուգալ, լեզուն կը բացուի.

— Ափսո՞ս, կ'ըսէ, ինչո՞ւ սպաննեցիք, հաղիւ
ձի մըն էի ճարեր, այնքան պիտի քշէի որ...

Լուրը կ'երթայ կը հասնի այդ երկրին իշխանին
ամրոցը: Մարդ, կին, մեծ, պատիկ դուրս կը թափին
Քաջ-Նազարն ընդունելու: Ժողովուրդը վրան երդ
կը կապէ ու կ'երգէ:

Եւ իշխանը իր գեղեցիկ աղջիկը կուտայ անոր,
եօթը օր եօթը գիշեր հարսնիք կ'ընեն ու կը գովեն
հարսն ու փեսան:

Դուն մի ըսեր, այս աղջիկը ուզած է եղեր հա-
րսան երկրի թագաւորը: Երբ կ'իմանայ որ իրեն չեն
տուեր, ուրիշի հետ են ամուսնացուցեր, զօրք կը
ժողվէ ու կուգայ իշխանին վրայ:

Իշխանի մարդիկը կուգան Քաջ-Նազարի մօտ,
պատերազմի լուրը կը յայտնեն, գլուխ կուտան, առ-
ջնը կը կենան և անոր հրամանին կը սպասեն:

Պատերազմի անունը որ կը լսէ՝ Նազարը կը սար-
սափի, դուրս կը նետուի, որ փախչի ետ իրենց գիւ-
ղը: Մարդիկ կը կարծեն որ կ'ուզէ իսկոյն վաղ
տալ ու յարձակի թշնամի բանակին վրայ: Առջեր կը

նետուին, կը բոնեն, կը խնդրեն, թէ այսպէս առանց
դէնք ու զրահի ո՞ւր կ'երթաս, ի՞նչ կ'ընես, գլխէդ
ձե՞ռք ես վերցուցեր, ի՞նչ է...

Կը բերեն զէնք ու զրահ կուտան, իր կինն ալ կը
խնդրէ միւսներէն, որ չժողնեն Նազարը իր քաջու-
թենէն ապրուած մինակը յարձակի թշնամի զօրքին
վրայ:

Եւ լուրը կ'երթայ կը տարածուի զօրքին ու ժո-
ղովուրդին մէջ, լրտեսներու միջոցով ալ կը հասնի
թշնամիին, թէ Քաջ-Նազարը մինակ առանց զէնքի
կը թոչէր դէպի պատերազմի դաշտը, հաղիւ են զըս-
պել կարողացեր և շրջապատած կը բերեն...

Պատերազմի դաշտին վրայ ամենի նժոյգ մը կը
բերեն և Նազարը կը նստեցնեն վրան: Ոգերուուած
զօրքն ալ անոր հետը առաջ կը շարժուի ահազին աղ-
մուկով:

— Կեցցէ Քաջ-Նազար: Մա՞ն թշնամիին:

Նազարին տակի նժոյգը, որ կը տեսնէ, թէ վը-
րան ի՞նչ անպէտքին մէկն է նստած՝ կը խրինջայ,
գլուխը կ'առնէ ու առաջ կը նետուի, շիտակ դէպի
թշնամիին բանակը: Զօրքերը կը կարծեն թէ Քաջ-
Նազարը յարձակում գործեց, ուռա՛, կը պոռան ու
իրենք ալ ետևէն կը յարձակին ամենան սաստկու-
թեամբ: Նազարը, որ կը տեսնէ, թէ կարողանալու
չէ ձիուն գլուխը պահել և քիչ է մնացեր, որ վար
իյնայ, ձեռքը կ'երկարէ կ'ուզէ ծառի մը փաթթուի:
Եկուր տե՛ս, որ ծառը փոտած է եղեր, գերանի չափ
ձիւզը կը կոտրի, կը մնայ անոր ձեռքը:

Թշնամի զօրքերը, որ առաջուրնէ համբաւը լսեր
էին ու ահը իրենց սիրտն էր, աս ալ որ իրենց աշ-
քովը կը տեսնեն, ալ մէջերնին ուժ չի մնար: Երես-
նին կը դարձնեն ու փախի՛ր, հա՛ փախի՛ր, թէ մարդ

Ես գլուխդ ազատէ , Քաջ-Նազարը ծառերը արմատա-
հան ընելով հիմա կը հասնի...

Այդ օրը թշնամիէն ինչքան որ կը կոտորին՝ կը
կոտորին . մնացածները թուրերնին կը բերեն կը դը-
նեն Քաջ-Նազարի ոտքերուն տակը , կը յայտնեն ի-
րենց հպատակութիւնն ու հնազանդութիւնը :

Ու պատերազմի ահեղ դաշտէն Քաջ-Նազարը ամ-
րոց կը վերադառնայ : Ժողովուրդը յաղթական կա-
մարներ կը կապէ . աննկարազրելի ոգևորութեամբ ,
ուռաներով ու կեցցէներով , երգով ու երաժշտու-
թիւնով , աղջիկներով ու ծաղիկներով , պատգամա-
ւորութիւններով ու ճառերով դէմը կ'երթան : Այն
տեսակ փառք ու պատիւ , որ Նազարը մնացեր էր ապ-
շած ու շուարած :

Այսպէս առքով-փառքով ալ կը բերեն , կը հրա-
տարակեն իրենց թագաւոր ու կը բազմեցնեն թագա-
ւորական գահը : Քաջ-Նազարը կը դառնայ թագաւոր
ու կը տեսնէ , որ ամբողջ աշխարհքը իր բուռին
մէջն է :

Կ'ըսեն մինչև այսօր ալ դեռ կ'ապրի ու կը թա-
գաւորէ Քաջ-Նազարը : Եւ երբ քաջութեան , խելքի
ու շնորհքի մասին մօար խօսք կը բանան , կը ծիծա-
ղի ու կ'ըսէ .

— Ի՞նչ քաջութիւն , ի՞նչ լելք , ի՞նչ շնորհք .
պարապ բաներ են բոլորը : Բանը մարդուս բախտն
է : Բախտ ունիս , քե՛ֆ ըրէ...

Եւ կ'ըսեն թէ մինչև այսօր ալ քե՛ֆ կ'ընէ Քաջ-
Նազարը ու կը խնդայ աշխարհքի վրայ :

ԱՆՏԱՌԻՆ ՄԱՆՈՒԿԸ

Գրեց՝ Դ. Աղայեան

Անտառին խորը օրրոց մը կար կապուած և անոր
մէջը մանուկ մը դրուած : Մանուկը կուլար : Մայր
չկար քովը որ կաթ տար , հայր չկար որ պահպանէր
զինքը : Անտառին մէջ մարդ չկար :

Գթասիրտ եղնիկ մը՝ կաթնալից կուրծքով օրրո-
ցին մօար եկաւ իր ձագուկին հետ և տխուր ձայնով
ըսաւ երախային .

Սիրուն երախայ , որբ ես մնացեր ,
Քո անբախտ մայրդ գերի են տարեր :
Ան զնա՞ց , կորա՞ւ , ալ ետ չի դառնար ,
Ալ կրկին անգամ քեզի ծիծ չի տար :
Ան քեզ փաթթեց լայն տերեններով ,
Օրրոցին կապեց , «նանիկ» ըսելով .
Անիկա կու լար աղի արցունքով ,
Վերջին օրօրը ան կ'ըսէր լալով .

«Օրօր , մանկիկս , օրօր
Հովը կու գայ՝ ժաժ կուտայ ,
Եղնիկը կու գայ՝ կաթ կուտայ ,
Օրօր , գառնուկս , օրօր...»

Ահա եկեր եմ , որ քեզ կաթ տամ ես ,
Պահեմ , պահպանէմ իմ ձագուկիս պէս :

Եղնիկը կաթ տուաւ երախային։ Ան կշապաւ ու քնացաւ։ Եղնիկը իր ձագուկը թողուց երախային մօտ, իսկ ինքը գնաց արածելու մօտերը, որ կաթը շատցնէ և գայ երկուքին ալ ծիծ տայ։ Զագուկը մընաց երախային մօտ, օրօրեց զայն և օրօր ըսաւ.

Օրօր, մանկիկս, օրօր,
Մայրս մօրդ նման չէ,
Ամէն խոտէ չի կրծեր,
Ամէն ջուրէ չի խմեր,
Ամէն գետնի չի նստիր,
Ան սարէ սար ման կու գալ,
Որբ կը գտնէ՝ ծիծ կուտայ,
Օրօր, մանկիկս, օրօր . . .
Օրօր, որբուկս աղուոր։

Եղնիկը կուրծքը լեցուն ետ դարձաւ անտառէն ու կաթ տուաւ մանուկին ալ, ձագուկին ալ։

Ով որ տարիով կը մեծնար, մեր երախան օրով կը մեծնար։ Շատ չ'անցաւ, ան դուրս եկաւ օրրոցէն, օր մը շորեքթաթ տուաւ, միւս օրը ոտքի կանգնեցաւ, քանի մը անզամ սահեցաւ, վար ինկաւ, բայց շուտով ամրացաւ և սկսաւ եղնիկին ետևէն վաղել։

Թագաւոր մը անզաւակ էր։ Երազին մէջ ըսին։ «Թագաւոր, Աստուած քեզի որդի մը պիտի տայ անտառին խորը»։

Անզամ մը անզաւակ թագաւորը որսի ելաւ իր որսորդներուն հետ։ Շատ որոնեցին, ոչինչ չգտան, բայց երբ անտառին խորը հասան, հոն եղնիկի մը հետքը գտան և անոր մօտ մանուկի մը ոսնատեղերը։ Ամէնը զարմացեր էին և չէին հաւատար որ ոտ-

նասաեղերը մանուկի մը ըլլան։ բայց թագաւորը իսկոյն յիշեց իր երազը և հրամայեց որսորդներուն, որ մանուկի հետքովը քշեն ծիերը և ուր որ ըլլայ՝ գըտնեն զայն։

Որսորդները զացին և երկու ժամ չանցած՝ աղուոր մերկ աղայ մը բերին թագաւորին առջեւ պատմեցին, թէ ինչպէս գտան զայն եղնիկի մը ծիծը ծրծելու ատեն։

Թագաւորը շատ ուրախացաւ, գրկեց մանուկը, համբուրեց և անունը գրաւ Եղնորդի։ Եղնորդին մեծցաւ թագաւորի պարատին մէջ, լաւ ուսում առաւ, վերջը դարձաւ թագաւոր և մեծ զօրքով գնաց իր մայրը աղատեց գերութենէն։



ԵՐԵԲ ԹԻԹԵՌՆԻԿ

Թարգմ. Օրբելին:

Անգամ մը կարմիր, ճերմակ ուղեղին երեք թիթեռնիկներ զիրար հաւնեցան ուրնկերացան։ Անոնք ամէն օր միշտ միմիանց հետ, տաք արեին տակ, ուրախ ու զուարթ կը թոչկոտէին։ Երբեմն ծաղիկներուն բարեկ կուտային, կը համբուրուէին, անոնց չորս կողմը կը դառնային շարունակ։ Երբեմն ալ անոնց հրաժեշտ տալով կ'երթային ուրիշ ծաղիկներու քով նոյնը կրկնելու։

Բոլոր ծաղիկները, ուրախ և գոհ սրառվ, իրենց գունաւոր թերթիկները կը բանային թիթեռնիկներուն առջե, սիրով կ'ընդունէին շանոնք, իրենց անուշ բուրմունքով կը կշտացնէին և ճամբուկը զնէին։

Օր մը անոնք, անհոգ ու զուարթ, ուրախ իսաղերով, բոյնէն հեռացան և սասափիկ անձրեկի մը բռնըուեցան։ Անոնց թերթ թրջուեցան, ամբողջ մարմինով դողալ սկսան։ Ի՞նչ պիտի ընէին խեղճ ընկերները, քանի որ բոյնը շատ—շատ հեռու էր, թոշին ալ դժուար և վտանգաւոր։ Այս ու այն կողմը ինկած էին տեղ գտնելու համար, երբ խոսերուն մէջ տեսան մէծ կակաչ մը։ Քովը գացին և միասին ըսին։

— Կարմիր կակաչ, բարի եղիր, թերթիկներդ քիչիկ մը բաց և մեղի համար տեղ ըրէ։ տէս, ինչպէս թրջուած ենք, ամբողջ մարմնով կը դողանք։

— Իմ թերթիկներս միշտ ալ պատրաստ են կարմիր թիթեռը հիւրասիրելու համար, ան իմ գոյնէս է, ըստ կակաչը, բայց միւսները ես չեմ կը բնար պատապարել։

— Երբոր չես ուղեր բոլորիս տեղ տալ, ըստ կարմիրը, ես ալ չեմ կրնար քեզի հիւր ըլլալ, աւելի լաւ է ուրիշ տեղ երթանք։

Միւսնք հեռացան, քիչ ետքը տեսան շուշան մը։

— Աղուոր շուշան, համեստ ծաղիկ, բարի եղիր, թերթիկներդ քիչիկ մը բաց, երեք թրջուած թիթեռնիկներուն անկիւն մը տուր։

— Իմ թերթիկներս միշտ ալ պատրաստ են ճերմակ թիթեռը հիւրասիրելու համար, միւսները չեմ կրնար պատապարել։ — Ըստ շուշանը։

— Եթէ այդպէս է, քովդ չեմ մնար, ըստ ճերմակ թիթեռը բարկացած, աւելի լաւ է ուրիշ տեղ երթանք։

— Նորէն հեռացան և այս անգամ տեսան դեղին նարգիկ մը։

— Նարգիկ, այս նարգիկ, արդեօք չես կրնար յոպնած, թրջուած ու տանջուած երեք քոյրերուս տեղ մը, անկիւն մը շնորհել, օգնել մեղի։

— Ցաւով կ'ըսեմ, երեք քոյրերդ ալ չեմ կրնար պատապարել, բայց գեղին թիթեռը կրնայ մնալ, ըստ նարգիկը։

Եթէ այդպէս է, քու քովդ ալ չեսք մնար, աւելի աղէկ է երեք քոյրերով միասին ըլլանք, միասին թրջուինք, միասին մեռնինք՝ քան թէ բաժան—բաժան, իրարմէ հեռու և անընկեր մնանք։ — Ըսին թըրջուած քոյրերը միասին և նորէն թուան։

Արեւ բարձրէն այս ամէնը լսեց, աչքով տեսաւ. Արեւ բարձրէն այս ամէնը լսեց, աչքով տեսաւ.



թիւնը, ասոր համար ալ տաք ճառագայթներով ամպերը ցրուեց, անձրել հեռացուց և խկոյն չորցուց ու աղէկ մը տաքցուց թիթեռնիկները:

Երեք քոյրերը շնորհակալ եղան բարի արեին, նորէն վեր թռան, շա'տ ու շա'տ խաղացին և, ուրախ ու զուարիթ, երեքն ալ միասին տուն դարձան:

Վ Ե Ր Զ